



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 սեպտեմբերի 2018 թվականի
Թիվ 122-Ա, քաղաք Երևան

«ՋԻ ԱՌ Ի ՓԻ ՍԻ Օ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ԱՐՄԵՆ ԱՇՈՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի սեպտեմբերի 12-ի դռնբաց նիստում քննարկեց «ՋԻ ԱՌ Ի ՓԻ ՍԻ Օ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և ֆիզիկական անձ Արմեն Աշոտի Պետրոսյանի համակենտրոնացման վերաբերյալ հարցը:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Ընկերությունը և ֆիզիկական անձ Արմեն Պետրոսյանը 2018 թվականի օգոստոսի 16-ին դիմում են (այսուհետ՝ Դիմում) ներկայացրել Հանձնաժողով հայտնելով, որ ֆիզիկական անձ Արմեն Պետրոսյանը ցանկանում է ձեռք բերել Ընկերության տոկոս բաժնետոմսերը: Ընկերությունը և ֆիզիկական անձ Արմեն Պետրոսյանը խնդրում են թույլատրել նշված համակենտրոնացումը:

Դիմումի հիման վրա Հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Դիմումին կից ներկայացվել են Ընկերության և ֆիզիկական անձ Արմեն Պետրոսյանի կողմից կազմված հայտարարագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Ներկայացված տեղեկությունների համաձայն, Ընկերությունը գրանցվել է 2012 թվականին, իրականացնում է ֆերմովիբրենի մեծածախ առևտուր, հանդիսանում

Ֆինանսական տարվա վերջի դրությամբ ակտիվների արժեքը կազմել է .
դրամ, հասույթի չափը՝ դրամ: Ընկերությունը 2017 թվականի ընթացքում

արտահանել է ֆերմովիբրեն: Նախատեսվող գործարքի գինը կազմում է դրամ: Համաձայն հայտարարագրերի համակենտրոնացման նպատակն է Ընկերության բաժնետոմսերի ձեռքբերումը

կողմից: Համակենտրոնացման արդյունքում ակնկալվում է Ընկերության նոր ներքին քաղաքականության և նոր ռազմավարության ներդրում:

Հարկ է նշել, որ ֆիզիկական անձ Արմեն Պետրոսյանին են պատկանում

«Ռադիո-ՊՌՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 100 տոկոս բաժնեմասը (ռադիոընկերություն),

«Համանվագ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 100 տոկոս բաժնեմասը (գույքի վարձակալություն), «Անիվների վրա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 100 տոկոս բաժնեմասը (գույքի վարձակալություն), «Լավաշ Քոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 100 տոկոս բաժնեմասը (ծառայությունների մատուցում):

Միաժամանակ ֆիզիկական անձ Արմեն Պետրոսյանի 2018 թվականի սեպտեմբերի 7-ի գրության համաձայն, վերջինիս է պատկանում նաև «Դարֆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 50 տոկոս բաժնեմասը (գործունեության ոլորտը՝ անվադողերի վաճառք և ավտոտեխսպասարկում), «Չերիոտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 100 տոկոս բաժնեմասը (գործունեության ոլորտը՝ անվադողերի վաճառք և ավտոտեխսպասարկում), «Քեյք Հաուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 67 տոկոս բաժնեմասը (գործունեության ոլորտը՝ հրուշակեղենի արտադրություն և վաճառք): Հարկ է նշել, որ ֆիզիկական անձ Արմեն Պետրոսյանը հանդիսանում է

և «ԷյՓի Ընդ Էս Քոնսալթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ (գործունեության ոլորտը՝ անշարժ գույքի վարձակալություն) ընկերությունների տնօրենը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում տնտեսվարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կամ ձեռք բերողին արդեն պատկանող փայաբաժնի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոսը կամ ավելին:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե՝ համակենտրոնացման մասնակիցների ակտիվների կամ հասույթի ընդհանուր արժեքը (չափը) կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների կամ հասույթի արժեքը (չափը) դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակցի (մասնակիցների) ակտիվների և հասույթ(ներ)ի արժեքը (չափը) սահմանելու, տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտարարագրման կարգի և հայտարարագրի ձևի մասին» թիվ 478-Ն որոշմամբ սահմանված ակտիվների կամ հասույթ(ներ)ի արժեքը (չափը):

Փաստորեն համակենտրոնացման մասնակցի ակտիվների և հասույթի արժեքը (չափը) գերազանցում են Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 478-Ն որոշմամբ սահմանված ակտիվների և հասույթի արժեքը (չափը), ուստի կարելի է եզրակացնել, որ նշված գործարքն Օրենքի իմաստով հանդիսանում է համակենտրոնացում և այն ենթակա է հայտարարագրման:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ընկերությունը և ֆիզիկական անձ Արմեն Պետրոսյանի մասնակցությամբ ընկերությունները գործում են տարբեր ապրանքային շուկաներում, Հանձնաժողովը գտնում է, որ նշված համակենտրոնացումը մրցակցությունը չի խոչընդոտում և ենթակա է թույլատրման:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով Օրենքի 8-րդ, 9-րդ հոդվածները, 19-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետը, ինչպես նաև Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 478-Ն որոշումը՝ Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է

1. Թույլատրել «ՋԻ ԱՌ Ի ՓԻ ՍԻ Օ» փակ բաժնետիրական ընկերության և ֆիզիկական անձ Արմեն Աշոտի Պետրոսյանի համակենտրոնացումը՝ ֆիզիկական անձ Արմեն Աշոտի Պետրոսյանի կողմից «ՋԻ ԱՌ Ի ՓԻ ՍԻ Օ» փակ բաժնետիրական ընկերության փայաբաժնի ձեռքբերման միջոցով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը համապատասխանաբար «ՋԻ ԱՌ Ի ՓԻ ՍԻ Օ» փակ բաժնետիրական ընկերությանը և ֆիզիկական անձ Արմեն Աշոտի Պետրոսյանին հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԱԲՈՅԱՆ